# ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ, ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐ

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը խոշորագույն իրադարձություն հանդիսացավ մեր երկրի կյանքում։ Համագումարն ամփոփեց կուսակցության և ժողովրդի վերջին տարիների վիթխարի աշխատանքի արդյունքները, մշակեց առաջիկա ժամանակաշրջանի քաղաքական գիծը և գիտականորեն հիմնավորված ծրագիրը։ Նա ընդգծեց ՍՍՀՄ-ում կոմունիստական շինարարության համաշխարհային պատմական նշանակությունը։ Մեր կուսակցության բարձրագույն համաժողովը միաժամանակ ցույց դրեց աշխարհի բոլոր հեղափոխական ուժերի ամրապնդվող միասնությունը և ունեցավ նաև միջազգային մեծ նշանակություն։*

*Համագումարին տրված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ կատարված է ՍՄԿԿ XXIII համագումարից հետո կուսակցության և ժողովրդի գործունեության հիանալի արդյունքների խոր վերլուծությունը և սահմանված է մարտական ծրագիրը այն պայքարի, որ մղվում է մեր երկրում կոմունիստական շինարարության նոր հաջողությունների համար, սոցիալիզմի երկրների համախմբվածության և հզորության հետագա ուժեղացման, կոմունիստական ու բանվորական կուսակցությունների, բոլոր հակաիմպերիալիստական ուժերի միասնության ամրապնդման համար։*

*Անցած ժամանակաշրջանում մեր երկրի առաջ դրված խնդիրների կատարման համար մղված հետևողական ու հաստատակամ պայքարի շնորհիվ խոշոր հաջողություններ են ձեռք բերվել կոմունիստական շինարարության բոլոր ասպարեզներում, է՛լ ավելի ամուր ու հուսալի են դարձել Սովետական Միության միջազգային դիրքերը։ Հաջողությամբ ավարտելով ութերորդ հնգամյակը, մեր ժողովուրդը կուսակցության ղեկավարությամբ նոր խոշոր քայլ կատարեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, սոցիալիստական հասարակական հարաբերությունների զարգացման, աշխատավորների բարեկեցության բարձրացման, նոր մարդու դաստիարակության գործում։*

*Էկոնոմիկայի զարգացումը հետևողականորեն արագացնելու գլխավոր ուղին այժմ հանդիսանում է հանրային արտադրության արդյունավետության բարձրացումը գիտատեխնիկական առաջադիմության և բոլոր ռեզերվների ավելի լրիվ օգտագործման հիման վրա։ Համագումարը նշեց, որ անհրաժեշտ է գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները օրգանապես միացնել տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների հետ։*

*Կարևոր խնդիր է ժողովրդական տնտեսության պլանավորման ու կառավարման հետագա կատարելագործումը, նրա գիտական մակարդակի բարձրացումը։ Խոսքը վերաբերում է ամենից առաջ արտադրության տեխնիկական վերադիմման կառավարման լենինյան սկզբունքները հետևողականորեն իրագործելուն, նյութական և բարոյական խթանների դերը մեծացնե-*

լուն, տնտեսության կառավարման գործում աշխատավորներին է՛լ ավելի լայնորեն ներգրավելուն։

Սոցիալական քաղաքականության բնագավառում կուսակցությունը իրագործելու է սովետական հասարակության միասնության հետագա ամրապնդման, դասակարգային ու սոցիալական խմբերի, բոլոր ազգերի և ազգությունների մերձեցման, սոցիալիստական դեմոկրատիայի անշեղ զարգացման, հասարակական ու պետական գործերի լուծմանը մասսաների ավելի ու ավելի ակտիվ ներգրավման, աշխատավորների կոմունիստական գիտակցականության բարձրացման կուրս։

Անցած հնգամյակը սովետական գիտության և տեխնիկայի բուռն զարգացման ժամանակաշրջան էր։ Սակայն գիտատեխնիկական առաջադիմության վճռական արագացումը մնում է գլխավոր խնդիրներից մեկը։ Այժմ, երբ ավելի ու ավելի մեծ չափով է դրսևորվում գիտության՝ որպես անմիջական արտադրողական ուժի դերը, գլխավոր են դառնում արդեն ոչ թե նրա առանձին նվաճումները, որքան էլ փայլուն լինեն դրանք, այլ ամբողջ արտադրության գիտատեխնիկական բարձր մակարդակը։ Դա չափազանց պատասխանատու խնդիրներ է դնում մեր գիտության առջև, պահանջում է բարձրացնել նրա արդյունավետությունը, է՛լ ավելի ծավալել ֆունդամենտալ հետազոտությունները, գիտնականների ուժերը և ուշադրությունը կենտրոնացնել գիտատեխնիկական առաջադիմության առավել կարևոր ու հեռանկարային ուղղությունների վրա։

«Գիտության ու տեխնիկայի առաջադիմությունը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գլխավոր լծակն է,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Լ. Ի. Բրեժնևի հաշվետու զեկուցման մեջ։— Ահա թե ինչու այնպիսի կարևորագույն հարցում, ինչպիսին գիտության ու տեխնիկայի զարգացումն է, մենք պարզորոշ պետք է տեսնենք հեռանկարները, դրանք հաշվի առնենք գործնական աշխատանքում։ Իսկ հեռանկարներն այնպիսիք են, որ արտադրողական ուժերի զարգացման մեջ գիտության և նրա հայտնագործությունների ազդեցության ներքո սկսված հեղաշրջումը գնալով ավելի նշանակալի կդառնա և ավելի կխորանա։ Մեր առջև ծառացած է պատմական կարևորություն ունեցող խնդիր՝ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները օրգանապես միացնել տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելություններին հետ, ավելի լայնորեն զարգացնել արտադրության հետ գիտության միացման սեփական, սոցիալիզմին հատուկ ձևերը»։

Մեր դարաշրջանում գիտատեխնիկական հեղափոխությունը հսկայական ազդեցություն է գործում ողջ արտադրության և հասարակական զարգացման վրա։ Սոցիալիստական կարգերը ամենալայն հնարավորություններն են ընձեռում գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ ստեղծված հնարավորությունները առավել արդյունավետությամբ օգտագործելու համար։ Կոմունիզմին անցնելու շրջանում սոցիալիստական հասարակարգի տնտեսական ու սոցիալական օրենքների հետագա խորը ուսումնասիրությունը մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա, ինչպես նաև գիտատեխնիկական հեղափոխության հնարավորությունների բացահայտումը պետք է լինեն գիտնականների ուշադրության կենտրոնում։

Գիտության առաջընթացի ուղիները պլանավորելիս մենք պետք է շարունակ հիշենք, որ ժամանակակից հասարակության զարգացման բնագավառում

գիտության դերը շատ մեծ է, որովհետև բնական ու հասարակական գիտությունների ամբողջության վրա է հենվում այն բազմազան հարցերի կոմպլեքսը, որն ընդգրկում է նյութական արտադրությունից մինչև մարդկանց կոմունիստական աշխարհայացքի ձևավորումը տարածվող պրոբլեմները։

Եթե մեզ հաջողվի գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները միավորել սոցիալիստական հասարակարգի առավելությունների հետ, այն ժամանակ մենք կկարողանանք բարեհաջող կերպով լուծել մեր երկրի առաջ դրված մեծ խնդիրները։

Հաղթանակած սոցիալիստական կարգերի պայմաններում գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ լիովին օգտագործելու բնագավառում մեծ անելիքներ ունեն թե՛ մեր գիտության, և թե՛ արդյունաբերության աշխատողները։ Ինչպես գիտության, այնպես էլ ժողովրդական տնտեսության աշխատողները պետք է ամեն կերպ ձգտեն գիտության բոլոր նորագույն նվաճումները ներդնել մեր ժողովրդական տնտեսության մեջ։ Դա մեծ պատասխանատվություն է դնում մեր ամբողջ երկրի գիտական աշխատողների վրա, հետևաբար և մեր ակադեմիայի աշխատողների վրա։ Առաջին հերթին պահանջվում է ավելի ևս բարձրացնել մեր գիտական հիմնարկների աշխատանքի էֆեկտիվությունը։ Մյուս կողմից հարկավոր է, որ արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառի աշխատողները իրենք նույնպես հետևեն գիտության նորագույն նվաճումներին և ամեն կերպ օժանդակեն դրանց ներդրմանը։ Դա մի բարդ պրոցես է, որի միջոցով գիտությունը և տեխնիկան ազդում են ժողովրդական տնտեսության վրա։ Պետք է ակտիվ աշխատեն այդ պրոցեսի բոլոր օղակները, և այդ թվում՝ գիտական աշխատողները, որոնք պետք է իրենց աշխատանքների արդյունքներն ու նվաճումները այնպիսի վիճակի հասցնեն, որպեսզի դրանք հնարավոր լինի ներդնել ժողովրդական տնտեսության մեջ։

Նոր հնգամյա պլանը խոշոր խնդիրներ է դնում նաև Սովետական Հայաստանի առաջ։ Այդ խնդիրներն ավելի բարդ են, քան նախորդ հնգամյակներում և դրանց լուծումը պահանջում է Հայաստանի ամբողջ աշխատավորության ուժերի ավելի մեծ լարում, որովհետև Հայաստանում արդյունաբերության զարգացման բնագավառում, որն այսօր կազմում է մեր տնտեսության գլխավոր ճյուղը, շատ ավելի մեծ աճ է նախատեսվում, քան միջին աճը Սովետական Միության մեջ։ Այդ խնդիրը անհնար է լուծել առանց գիտության օգնության։ Այս բոլորից բխում է այն պատասխանատվությունը, որ դրվում է մեզ վրա։ Մեր հանրապետությունում պետք է շարունակել զարգացնել արդյունաբերության այն բնագավառները, որոնք եղել են ավանդական մեր հանրապետության համար (գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը և այլն) և որոնց համար նախատեսվում են շատ խոշոր կառուցումներ։ Առանց մեր գիտնականների ջանքերի, այս խնդիրները չեն կարող իրականացվել անհրաժեշտ մակարդակով։ Այսպես, օրինակ, հայտնի է, որ Հրազդանի կոմբինատը մեծ հեռանկարներ է բաց անում մեր երկրի բնական ռեսուրսների օգտագործման տեսակետից։ Այն նոր նյութերը, որ արտադրվելու են այդ կոմբինատում, բազմապիսի կիրառություն կունենան, և որքան գիտությունը նոր ասպարեզներ կարողանա ցույց տալ այդ նոր նյութերի (մասնավորապես՝ մետասիլիկատների) օգտագործման համար, այնքան այդ գործը ավելի հաջող կգնա։ Հրազդանի կոմբինատի ապագա գործունեությունը սեր-

տորին կապված կլինի մեր գիտական աշխատանքների հետ, մասնավորապես՝ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի լավ աշխատանքի հետ։

Ընդունված որոշումների մեջ նշված է, որ Զոդի կոմբինատում պետք է կազմակերպել ոսկու արտադրությունը և որ Զոդի կոմբինատը պետք է ավարտել։ Դա կարելի է անել ցածր մակարդակով, օգտագործելով միայն ոսկին, բայց կարելի է անել և այնպես, որ կատարելագործվի կոմբինատի տեխնոլոգիական պրոցեսների կազմակերպումը, որ նույն հանքաքարից հանվի ոչ միայն ոսկի, այլև, ինչպես առաջարկել են մեր երկրաբանները, մի շարք այլ մետաղներ, որոնց պարունակությունը հանքաքարում բավական բարձր է (թելուր և այլ էլեմենտներ)։ Այնպես որ, Զոդի տեխնոլոգիան մի շարք տեսակետներից պետք է լինի մեր գիտնականների ուշադրության կենտրոնում։

Սկսված է ատոմային էլեկտրակայանի կառուցումը, որը պետք է ավարտվի այս հնգամյակի վերջում։ Դա շատ մեծ ներդրումների հետ է կապված և մեծ ծախսեր է պահանջում։ Ատոմային կայանից մենք կարող ենք ստանալ շատ մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա։ Բայց եթե այդ կայանում լինի նաև համապատասխան ռադիացիոն կոնտուր, ապա այն կարող է օգտագործվել պանաղան արդյունաբերական պրոցեսների համար, այդ թվում նաև մեր քիմիական արդյունաբերության արտադրած տարբեր նյութերի որակը փոխելու, ջրերի մաքրման նպատակով և այլ խնդիրների համար։ Բայց, ցավոք, պետք է նշեմ, որ մեր քիմիկոսները և էներգետիկները առայժմ այս խնդրով քիչ են զբաղվում։ Այդ պետք է անել ժամանակին, որովհետև ատոմային կայանի կառուցումը նրանց չի սպասի։

Մեր գիտնականները, մեր տեխնիկական մտավորականությունը մեծ անելիքներ ունեն արտադրության առաջ կանգնած խնդիրների լուծման, հանրապետության համար մաքսիմալ շահույթ, մաքսիմալ օգուտ ապահովելու բնագավառում։

Մեզ մոտ պետք է շարունակեն զարգանալ նաև ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, միկրոբիոլոգիական արդյունաբերությունը։ Դրանք արդյունաբերության այն ճյուղերն են, որոնք անմիջականորեն կապված են գիտական աշխատանքի արդյունքների հետ և նույնպես պահանջում են գիտնականների մեծ ուշադրություն։

Տեխնիկական առաջադիմությունը կապված է տեխնոլոգիական նոր պրոցեսների կազմակերպման, նոր նյութերի կամ նոր որակով արդեն հայտնի նյութերի ստեղծման հետ։ Շատ կարևոր է նաև նոր սիստեմների ստեղծումը, սիստեմներ, որոնք պետք է ծառայեն ժողովրդական տնտեսությանը։ Այս բնագավառներում մենք մեծ գործ ունենք կատարելու։

Նոր տեխնոլոգիայի ստեղծման հարցերով մեզ մոտ կարող են զբաղվել ընդհանուր անօրգանական քիմիայի, օրգանական քիմիայի, միկրոբիոլոգիայի, բիոքիմիայի ինստիտուտները, քիմիական ֆիզիկայի լաբորատորիան և այլն։ Մենք ունենք մի շարք ինստիտուտներ, որոնք մեծ անելիքներ ունեն նոր որակով հայտնի նյութեր ստեղծելու գործում։ Այդ ուղղությամբ արդեն աշխատում է նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որը պետք է զարգացնի իր աշխատանքները։ Մեծ աշխատանք կարող է կատարել նաև ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը։ Պետք է զարգացնել արդեն կատարվող աշխատանքները՝ նոր բյուրեղներ, մաքուր նյութեր ստեղծելու բնագավառում։ Բիոքիմիայի ինստիտուտը, ուտեղ նույնպես նոր նյութերի հարցը դրված է եղել,

պետք է ավելի սերտորեն ձևնամուխ լինի գործնական խնդիրների լուծմանը։ Ինչ վերաբերում է սիստեմների ստեղծմանը, ապա այստեղ մի շարք ինստիտուտներ կարող են մեծ աշխատանք կատարել։ Դրանք են՝ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, մեխանիկայի ինստիտուտը, հաշվողական կենտրոնը և անպայմանորեն բյուրականի աստղադիտարանը։

* * *

Սոցիալիստական արդյունաբերության, և ամենից առաջ նրա հիմքը կազմող ծանր ինդուստրիայի առաջնահերթ զարգացման՝ կուսակցության վարած կուրսը մեր երկիրը դարձրեց հզոր տերություն։ Կարելի է առանց չափազանցության ասել, որ միայն այդ կուրսի հետևողական իրականացումը մեզ հնարավորություն տվեց վերջ տալ մեր երկրի դարավոր հետամնացությանը, պաշտպանել սոցիալիստական հեղափոխության նվաճումները ներքին ու արտաքին հակահեղափոխության ոտնձգություններից, ապահովել սովետական ժողովրդի տնտեսական, սոցիալական և կուլտուրական առաջադիմությունը։

Ծանր ինդուստրիայի զարգացման արագ տեմպերը իրենց նշանակությունը լիովին պահպանում են նաև արդի պայմաններում, հատկապես այն պատճառով, որ առանց դրա չի կարելի լուծել ժողովրդի բարեկեցության բարձրացման արմատական խնդիրները։ Ծանր արդյունաբերությունը պետք է զգալիորեն ընդլայնի արտադրության միջոցների թողարկումը գյուղատնտեսության, թեթև և սննդի արդյունաբերության ավելի արագ զարգացման, բնակարանային շինարարության, առևտրի և բնակչության կենցաղային սպասարկման էլ ավելի լայն ծավալման համար։

Հայտնի է, որ ընթացիկ հնգամյակի ընթացքում մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառի խնդիրների մեջ մեծ նշանակություն է տրվում բնակչության բարեկեցությունը բարձրացնելու գործին և այդ կապակցությամբ՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության այն ճյուղերի զարգացմանը, որոնք կապված են ժողովրդի բարեկեցության բարձրացման հետ (թեթև, սննդի, լայն սպառման առարկաների արդյունաբերությունը) և որտեղ զարգացման տեմպերը զգալիորեն բարձրացվում են նախորդ հնգամյակի համեմատությամբ։ Կասկածից վեր է, որ այս բոլորը պետք է կատարվի տեխնիկական առաջընթացի հիման վրա, իսկ դա նշանակում է, որ բարձր տեմպերով պետք է շարունակեն զարգանալ ժողովրդական տնտեսության նաև այն ճյուղերը, որոնք ապահովում են տեխնիկական առաջադիմություն։

Մենք գիտակցում ենք, որ մեր ակադեմիայի գիտնականները շատ մեծ պատասխանատվություն ունեն հանրապետության զարգացման համար, բայց ի՞նչ կոնկրետ առանցքներով մենք պետք է մոտեցնենք մեր ինստիտուտների աշխատանքները արտադրությանը, որո՞նք են այդ ճանապարհները։ Ես կարծում եմ, որ առաջին «դեղատոմսն» այն է, որ բոլոր գիտահետազոտական ինստիտուտներում անհրաժեշտ է բարձրացնել հետազոտությունների գիտական մակարդակը և գիտական աշխատանքի էֆեկտիվությունը։ Թույլ գիտությունը չի կարող օգնել արտադրությանը, այդ կարող է անել միայն ուժեղ գիտությունը, որը գտնվում է անհրաժեշտ մակարդակի վրա։ Դա առաջին խնդիրն է։ Երկրորդ խնդիրն այն է, որ մեր ակադեմիայում, որպես աշխատանքի մակարդակի չափանիշ, պետք է ընդունվի նաև այն, թե գործնական

նշանակություն ունեցող ինչպիսի՞ ելք է ստացվում տվյալ գիտական հիմնարկից։ Առաջին հերթին պետք է հաշվի առնել այդ ելքը, այսինքն այն, թե դա ինչպիսի՞ ազդեցություն կարող է ունենալ գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության և առհասարակ ժողովրդական տնտեսության զարգացման վրա։

Մենք պետք է ավելի պահանջկոտ լինենք մեր ինստիտուտների նկատմամբ, իսկ ինստիտուտները՝ իրենց բաժինների և առանձին աշխատողների նկատմամբ։ Բայց պետք են նաև որոշ կոնկրետ միջոցառումներ։ Անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել ինստիտուտներում փորձնական արտադրությունների ստեղծումը։ Որոշ ինստիտուտներում մենք ունենք փորձնական արտադրություններ, որոնք միշտ իրենց արդարացրել են։ Դրանք շատ քիչ են, բայց այնտեղ, որտեղ նրանք կան, ճանապարհ են բաց անում գիտությունից դեպի կյանք։ Փորձնական արտադրություններ կամ խոշոր էքսպերիմենտալ տեղակայքեր՝ ահա այն շատ կարևոր միջոցներից մեկը, որը մեծ չափով կարող է օգնել գիտությունը ժողովրդական տնտեսության հետ կապելու գործին։ Դա վերաբերում է ինչպես ֆիզիկա-տեխնիկական, այնպես էլ կենսաբանական, քիմիական, երկրաբանական գիտություններին։

Ինստիտուտների դիրեկտորներից պահանջվում է մեծ համառություն և նախաձեռնություն։ Որոշ ինստիտուտներում, որտեղ աշխատանքը ավելի թույլ է կազմակերպված և չի ենթարկվում որևէ արտաքին ազդեցության, դիրեկտորները դիմադրում են դրան։ Բայց մենք պետք է աշխատենք հաղթահարել այդ վերաբերմունքը և հնգամյակի ընթացքում լուծենք գիտությունը արտադրության հետ կապելու խնդիրը։ Այժմ մեզ մոտ ստեղծվել է նոր բաժանմունք՝ ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքը, որը սերտ կապեր պետք է պահպանի մեր արդյունաբերության հետ, նրա մասնաճյուղային ինստիտուտների հետ, դառնա մեր հանրապետության տեխնիկական մտքի կենտրոն։ Մեր այդ նոր բաժանմունքը ամեն ինչ պետք է անի այդ ուղղությամբ մեր հույսերը արդարացնելու համար։

Ակադեմիայի ինստիտուտներում կատարվող գիտական աշխատանքը չի կարող չինական պարսպով սահմանագծվել հանրապետության այլ հիմնարկներում կատարվող գիտահետազոտական աշխատանքներից, նա պետք է ամենասերտ կերպով կապված լինի բոլոր գիտական հիմնարկների հետ, որոնք իրենց հերթին, ակադեմիայի մեջ պետք է գործնականում տեսնեն այն գիտական կենտրոնը, որը կարող է միավորել նրանց ուժերը և ավելի հեշտացնել խոշոր գիտատեխնիկական պրոբլեմների լուծման աշխատանքը։ Դրա համար ողջ ակադեմիայի, նրա բաժանմունքների, նախագահության աշխատանքները պետք է դրվեն անհրաժեշտ բարձրության վրա։

Գիտության մեջ բոլոր հարցերը լուծվում են կադրերի լավագույն ընտրության միջոցով։ Մեր գիտական հիմնարկների ղեկավարների, դիրեկտորների ընտրության հարցը շատ կարևոր է, նրանցից շատ բան է կախված։ Մենք պետք է շվախենանք ավելի արագ առաջ քաշել երիտասարդ կադրերին, նրանց ստեղծագործական մեծ ակտիվությունը միացնելով ավագ սերնդի գիտնականների փորձին։ Միայն այդ դեպքում մենք կստանանք լավ արդյունքներ։ Անհրաժեշտության դեպքում մենք պետք է ժամանակին միջամտենք և բարելավենք կադրերի վիճակը։

Այսօրվա գիտությունը շատ տեսակետներից տարբերվում է այն գիտությունից, որը ։ար մի քանի հնգամյակ առաջ։ Այն հագեցված է էքսպերիմենտալ գիտահետազոտական նոր տեխնիկայով, որին պետք է տիրապետեն մեր կադրերը։ Այստեղ մի քանի խնդիրներ են ծառանում մեր առջև։ Ինստիտուտները պետք է հագեցնել ժամանակակից սարքավորումներով։ Այդպիսիք մենք ունենք, բայց ամեն տեղ չէ, որ այդ սարքավորումները խելացիորեն են ծառայեցվում հիմնական խնդիրների լուծմանը։ Երբեմն սարքավորումը մի քանի անհաջող փորձերից հետո դնում են մի կողմ։ Կան, իհարկե, ինստիտուտներ, որտեղ տիրապետում են ժամանակակից գիտական տեխնիկային։ Պետք է ուսումնասիրել և գտնել այն պատճառները, որոնք խոչընդոտում են նոր գիտական տեխնիկայի ներդրմանը։ Օրինակ, ինստիտուտներ ունենք, որտեղ օգտագործվում են էլեկտրոնային միկրոսկոպներ, բայց մի քանի տեղերում դրանք լավ են օգտագործվում, իսկ որոշ տեղերում օգտագործվում են շատ քիչ։

Մեր էքսպերիմենտալ ինստիտուտներում պետք է այնպես անել, որ լաբորատոր սարքավորումները միշտ լինեն պատրաստ վիճակում և տեղին օգտագործվեն։ Դրա համար անհրաժեշտ են գործին տեղյակ համապատասխան կադրեր։ Պետք է ապահովվի մեր լաբորատորիաների ողջ սարքավորման կանոնավոր աշխատանքը. դա շատ կարևոր պահանջ է։ Եթե լաբորատորիաներ, սիստեմատիկաբար չեն զբաղվում սարքավորման կատարելագործման աշխատանքներով, ապա դա կտա շատ բացասական արդյունքներ։

Կա նաև մի ուրիշ հարց, որին նույնպես պետք է ուշադրություն դարձնել և մեծ աշխատանք կատարել այդ ուղղությամբ. դա էքսպերիմենտալ աշխատանքների ավտոմատացման հարցերն են։ Այն չափումները, որոնք կատարվում են մասնայաբար, գործիքներով, պետք է ավտոմատացվեն։ Այդ ավտոմատացումը հնշտանում է նրանով, որ մենք հնարավորություն ունենք ամենուրեք կիրառել տեսնորվա հաշվողական տեխնիկան։ Շնորհիվ մեր արտադրողների, Հայաստանում այդ հարցը համեմատաբար հեշտ է լուծվում, եթե չխոսենք առանձնապես մեծ հաշվիչ մեքենաների մասին։

ՍՄԿԿ XXIV համագումարում խոսվեց նաև բնության պահպանման բնագավառում գիտության և արտադրության առջև կանգնած խնդիրների մասին։ Պետք է ասել, որ մեր երկրի պայմաններում, երբ ամեն ինչ պլանաչափ է կատարվում, այդ խնդիրների լուծումը կարող է լիովին ապահովվել։ Մեզ մոտ բոլոր պայմանները կան բնությանը ավելի խնայողաբար վերաբերվելու համար։ Եթե այս կամ այն պատճառով խախտվում է բնության մեջ արդեն ստեղծված հավասարակշռությունը, մենք պետք է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնենք, որպեսզի հավասարակշռությունը համապատասխան ձևով վերականգնվի։

* * *

Կուսակցության XXIV համագումարը ընդգծեց հասարակական գիտությունների առաջնակարգ նշանակությունը մեր երկրի զարգացման համար։

Գիտատեխնիկական հեղափոխությունը մեծագույն փոփոխություններ է մտցնում մեր կյանքի բոլոր բնագավառներում։ Անցած հնգամյակների ընթացքում տեսական միտքը հարստացել է մի շարք նոր գրություններով ու եզրակացություններով այնպիսի կարևոր պրոբլեմների բնագավառում, ինչպիսիք են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ուղիները, արտա-

դրության արդյունավետության բարձրացումը, ժողովրդական տնտեսության զարգացումը և այլն։

Երկրի ժողովրդական տնտեսության զարգացման բարձր մակարդակն ապահովելու տեսակետից լրջորեն մեծանում են պահանջները պլանավորման, կառավարման, տնտեսական աշխատանքի մեթոդների նկատմամբ։ Ուժեղանում է էկոնոմիկայի բոլոր օղակների փոխադարձ կախվածությունը, որի հետևանքով մեծանում է տնտեսական պլանավորման, միջճյուղային կապերի սիստեմի կատարելագործման, նյութական մատակարարման բարելավման նշանակությունը։ Այս ամենը մեծ խնդիրներ է դնում տնտեսագիտության բնագավառի աշխատողների առաջ։

Տնտեսական ու սոցիալական միջոցառումների այն մեծ ծրագիրը, որ նշված է XXIV համագումարի որոշումների մեջ, պահանջում է ավելի ևս ուժեղացնել այն գիտական ուսումնասիրությունները, որոնք կապված են սովետական գիտության և մեր հասարակարգի հետագա զարգացման հետ։ Այստեղից բխում է այն հետևությունը, որ հասարակական գիտությունները պետք է ընդլայնեն ու խորացնեն մարքս-լենինյան աշխարհայացքի, կոմունիստական բարոյականության, մեր երկրի ժողովուրդների պատմության հետ կապված պրոբլեմների ուսումնասիրությունը։

Այսպիսով, գնալով պահանջները դեպի հասարակական գիտությունները մեծանում են։ Մի շարք ինստիտուտներ կարող են մեծ գործ կատարել իրենց առջև դրված բարդ խնդիրների լուծման բնագավառում։ Մեր հասարակությունը արագ փոխում է իր դեմքը, շնորհիվ սոցիալիստական շինարարության, շնորհիվ գիտատեխնիկական հեղափոխության։ Կատարվում են շափազանց բարդ պրոցեսներ, մարդկային գիտակցությունը և ապրելակերպը հաճախ չի կարողանում այնքան արագ յուրացնել ու հարմարվել այն նոր իրադրությանը, որը ստեղծվում է տեխնիկական արագ փոփոխությունների շնորհիվ։ Կյանքը պետք է հարմարվի նոր պայմաններին, և այստեղ առաջանում են տնտեսագիտական ու սոցիոլոգիական նոր ու բազմազան պրոբլեմներ։

Այժմ մենք ունենք նաև արևելագիտության ինստիտուտ, որը մեծ անելիքներ ունի։ Մենք շրջապատված ենք հարևան արևելյան երկրներով, և նրանց պատմության ու այսօրվա հարցերի լուսաբանությունը չպետք է դուրս մնա մեր տեսադաշտից։

Մեր հանրապետության զարգացման աճը արագ է, տեմպերը՝ բարձր։ Մեզանում կատարվում է հսկայական շինարարություն, բայց տնտեսության պահանջները ավելի մեծ են։ Առանց գիտության, առանց ամեն մի գիտական աշխատողի լավ աշխատանքի, այդ պահանջները անհնար է բավարարել։

Մեր ակադեմիայի բոլոր աշխատողների հայրենասիրական պարտքն է՝ ամեն ինչ անել գիտության անշեղ վերելքի համար։